



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 478 - Ա

26 նոյեմբերի 2019 թ.

**ՄՈՒՇԵՂ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Մուշեղ Խլղաթյանի դիմումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մուշեղ Խլղաթյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 13-ը ներառյալ /14 աշխատանքային օր/:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 13-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լիճքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Արթուր Ալեքսանյանի վրա:

3. Մուշեղ Խլղաթյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի դեկտեմբերի 16-ից:

26.11.2019



(Handwritten signature)

ՄԱՐԶՊԵՏ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՆՍՅԱՆ ԳՆԵԼ 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ